ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Նունիկ Դարբինյան[1]

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ *առասպելական արարածներ, իրանական բանահյուսություն, հիբրիդներ , հրեշներ, մեզմե աղեկները*

Առասպելական արարածները մեր նախնիների տեսած սարսափելի իրադարձությունների դրսևորումն են և այն երևակայական երևույթների արտացոլանքը, որ պարուրել են նրանց առօրյան: Այդ լեգենդներում ու հեքիաթներում նկարագրված չար արարածները և երբեմն էլ նրանց դեմ պայքարող հերոս մարդը խորհրդանշում են աշխարհին տիրանալու և դրա առեղծվածները բացահայտելու մեր ներքին մղումը:

Իրանական բանահյուսության մեջ բազմիցս հանդիպում են հրեշներ, գերբնական զորությամբ օժտված արարածներ: Այդ արարածները շատ հաճախ հանդես են գալիս ծերունու, գեղեցկուհու, կենդանու կամ հիբրիդի կերպարանքով: Անհնար է ճշգրիտ կերպով նշել այդ բոլոր արարածների ի հայտ գալու սկզբնաղբյուրը: Դժվար է ասել՝ արդյոք դրանք մեր հոգեբանական արխետիպներն են, մեր ներքին չարի և բարու պայքարի մարմնացու՞մը, թե՞ սարսափների դրսևորումը: Արարածների մի մասը մուտք են գործել կրոնական, մշակութային փոխազդեցության հետևանքով, երբեմն՝ մարդու և բնության համակեցության արդյունքում կամ զուտ երևակայության շնորհիվ: Այդ արարածները կապված են իրանական պատմության, տեղական բանահյուսության, առօրյա հավատալիքների հետ, և նրանց կերպարներն հանդիպում են նաև պատումներում ու

[1]Բ.գ.թ. ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, Իրանագիտության ամբիոն,էլ փոստ noonik.darbinyan@ysu.am

հեքիաթներում: Գիշերային մթության մեջ ննջողին խեղդող դյութիչ կնոջ կերպարանք ստացած սատանա, անցորդների շալակը նստող ու երբեք չիջնող, մարդու կամ կենդանու կերպարանք ընդունող բազում արարածներ կամ «մեզմե աղեկները»[2], որոնք ի հայտ են գալիս մերթ իրական կյանքում, մերթ երազների մեջ և աշխատում իրենց տիրապետության ներքո պահել մարդկանց:

Հոդվածի շրջանակներում մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ենք իրանական բանահյուսության մեջ, առասպելներում և հեքիաթներում հանդիպող արարածները և դասակարգել ենք նրանց: Դասակարգման հիմքում այդ արարածների ֆիզիկական, գործառնական և տարածաշրջանային առանձնահատկություններն են: Հոդվածում անդրադարձել ենք նաև այն ծեսերին և արարողություններին, որոնք կիրառվում են Իրանի տարբեր շրջաններում այդ արարածների կործանիչ ազդեցությունը նվազեցնելու կամ պաշտպանվելու նպատակով:

Այսպիսով, առեղծվածային արարածները դասակարգել ենք հինգ հիմնական խմբի մեջ

1- Հավքեր
2- Կենդանիներ
3- Անտրոպոզոմորֆային կերպարներ
4- Ջրային արարածներ
5-Մարդակերպ արարածներ
6- Հրեշներ ու չարքեր
7-Բարի արարածներ

1- Հավքեր

Իրանական հեքիաթներում կան բազմաթիվ հավքեր. առավել հայտնի են Սիմորղն ու Ղողնուսը: Չնայած դրանք շատ նման են

[2] Նահապետյան Ռ.Ա., Նորածնի խնամքին առնչվող սովորությունները աղձնիքահայերի ընտանիքում, ԵՊՀ, http://ysu.am/files/12NahapetyanR.pdf, էջ. 126

թվում միմյանց, և հաճախ ընթերցողը շփոթում է դրանց, սակայն այդ երկուսն ունեն հստակ տարբերություններ։

1.1. Ղողնուս

Ղողնուսը համեմատելի է փյունիկի հետ։ Չնայած այն շատ է հանդիպում իրանական հեքիաթներում, բայց այն զուտ «իրանական հավք» չէ։ Ղողնուսն առկա է նաև այլ ժողովուրդների բանահյուսության մեջ և առասպելներում։

Ասում են՝ այն միայնակ է, քանի որ չի զուգավորվում և սերունդ չի ունեում։ Ղողնուսի կտուցը շատ երկար է և հարյուրավոր անցքեր ունի։ Դրա շնորհիվ յուրահատուկ մեղեդի է արտաբերում և գաղտնիքներ է բացահայտում։

Ըստ լեգենդի՝ Ղողնուսը հինգ հարյուր տարուց մինչև հազար տարի թևածում է ցախերի վրա, սկսում է երգել, հրճվում է իր երգով, այրվում է սեփական կտուցից բռնկված կրակի մեջ, նրանից մնացած մի ձուն հրկիզվում է կրակի մեջ, ապա մոխրից մի նոր Ղողնուս է կյանք ստանում։ Այսպիսով, Ղողնուսը հանդես է գալիս միաժամանակ և՛ ծնողի, և՛ զավակի դերում։

1.2.Սիմորղ

Սիմորղը թռչուն է, որի մասին կարդում ենք բացառապես իրանական գրականության և բանահյուսության մեջ։ Այն իրանական գրականության մեջ հանդիպող ամենակարևոր արարածներից մեկն է։ Ղաֆ լեռան վրա բնակվող Սիմորղին հանդիպում ենք Շահնամեհի պատումներում, որտեղ Սիմորղի կերպարը երկու կերպ են մեկնաբանում։ Զալի պատումում այն անվանվում է «Եազդանի» այսինքն՝ Աստվածային, իսկ Էսֆանդիարի Հաֆթխանում՝ «Ահրիման», այսինքն՝ սատանայական։ Ահրիման Սիմորղն ավելի շատ նման է վիշապի բայց Զալի պատումում Սիմորղն իմաստուն է և բազմաթիվ

գաղտնիքների գիտակ։ Սիմորղն իր թևերի ներքո մեծացնում է Զալին և օգնում է Ռուստամին Էսֆանդիարի դեմ պայքարում։

Սիմորղին անդադառնում են նաև բազմաթիվ ուրիշ բանաստեղծներ, օրինակ՝ Աթթար Նեյշաբուրին իր հայտնի Մանթեղ ալ Թեյր պոեմում։

Որն է վերոնշյալ երկու հավքի տարբերությունը՝

-Ղողնուսն իրանական չէ, Սիմորղն ամբողջովին իրանական է։

-Ղողնուսը միայնակ թռչուն է և վերածնվելու համար պետք է մահանա, Սիմորղն այդպիսին չէ։

-Սիմորղը միասնության, աստվածայինի, վերին աշխարհների, ինչպես նաև մարդկային հոգու ճախրելու խորհրդանիշն է, Ղողնուսը՝ հավիտենականության։

-Սիմորղը վերացական է, մտացածին, իմաստնությամբ օժտված արարած, իսկ Ղողնուսն ավելի երկրային է։

-Սիմորղն ավելի շատ հոգևոր լիցք է կրում, քան երկրային։ Ղողնուսը, սակայն, անմահ թռչուն է հոգևոր լիցքով օժտված չէ։

1.3. Հոմա

Իրանական բանահյուսության մեջ հանդիպող երջանկաբեր թռչուն. հավատացել են՝ ում վրա ընկնի Հոմայի ստվերը, երջանկություն կբերի նրան։ Այդ իսկ պատճառով այդ թռչունին նաև անվանում են Հոմայե Սաադաթ, այսինքն՝ երջանկության կամ բարեբախտության Հոմա։ Հոման այնպիսի մեծ տեղ ու դեր է գրավում իրանական բանահյուսության մեջ, որ «Իրան Էյր» ավիաընկերության լոգոն հենց Հոմայի արտացոլումն է։ Լոգոյի հեղինակն է իրանահայ ճարտարապետ Էդվարդ Զոհրաբյանը։

Թախթե Ջամշիդում գտնվել է Հոմայի երկու արձան։ Իրանական գրականության մեջ Հոման, ընդհանրապես, համեմատելի է Սիմորղին։

1.4. Ռոխ

Հսկայական հավք է, որ կարող է բարձրացնել փղին ու ռնգեղջույրին: Ռոխի մասին կարդում ենք Հազար ու մի գիշերներում, Սինբադում:

1.5. Շահբազ կամ թագավորական արծիվ

Ըստ լեգենդի՝ Շահբազն ապրում է Դեմավենդում: Այդ թռչունը համարվում է Արյաների փրկիչը և Ֆարվահարի զավակներին դեպի Իրան զամին առջնորդողը:

1.6. Աշոզոշթ կամ Մորղե Բահման

Իրանական առասպելական բու է, որ եղունգ է ուտում: Իրանական առասպելաբանության մեջ Ահուրամազդան ստեղծել է այս թռչունին, որպեսզի այն դառնա բարի ուժերի օգնականը: Այս բուն անգիր գիտի Ավեստան և երբ այն կարդում է, սարսափում են հրեշները:

Հավատացյալները պետք է կարդան հետևյալ աղոթքը՝ «Ով Աշոզոշթ, այս եղունգների մասին եմ քեզ ասում և դրանք համարում եմ հենց քոնը. այդ եղունգները քեզ համար դառնան բազմաթիվ նիզակներ, դանակներ, աղեղներ, արծվի փետուրներով նետեր ու պարսատիկներ՝ Մազանիների դեմ պայքարելու համար»[3]:

1.7.Քարշիֆթ

Քարշիֆթն առասպելական սև թռչուն է, որ օժտված է խոսելու ունակությամբ: Նա համարվում էր բոլոր թռչունների կառավարիչը: Մեծ հեղեղի ժամանակ նա թռչում է թագավորի մոտ և ամբողջ Ավեստան անգիր ասում է երկու լեզվով՝ թռչունների և մարդկանց:

[3] Vendidad, Fargarde Havdahom, Translated by Ebrahimpur Davud, BavarBaran, Tehran, p. 263

2- Կենդանիներ

Իրանական առասպելներում և բանահյուսության մեջ այնքան էլ շատ տարածված չեն զուտ կենդանիները-ավելի շատ տարածված են կերպարանափոխված կենդանիները:

Թերևս առասպելներում հանդիպող կենդանու միակ օրինակը Քարքադանն է:

Քարքադան

Հեքիաթային արարած, որ ապրում է Հնդկաստանի ու Իրանի կանաչ դաշտերում: Ինչպես միաեղջյուրներին, այդպես էլ նրանց կարող են սանձել կույս աղջիկները: Իրանական պատումներում Քարքադանին անվանել են Քարգ: Այդ կենդանու եղջյուրին վերագրել են բուժելու զորություն: Կենդանու մասին առաջին անգամ հիշատակում է Ալ Բիրունին[4]: Տասներեքերորդ դարի վերջին Իրանցի բժիշկ Զաքարյայե Ղազվինին նրա եղջյուրի հատկությունը կապում է թույնի հետ[5]: «Աջայեբ ալ մախլուղաթ վա ղարայեբ ալ մոջուդաթ» գրքում նա նշում է եղջյուրի բուժական հատկությունների մասին:

3- Անտրոպոզոմորֆային կերպարներ

3.1. Բաշքուչ (միջին պարսկերենում) կամ Շիրդալ

Բաշքուչը կամ Շիրդալին հեքիաթային արարած է՝ առյուծի մարմնով, արծվի գլխով և ձիու ականջներով: Բաշքուչի պատկերները հիմնականում տարածված էին էլամական ճարտարապետության մեջ և դրանց լավագույն նմուշներից մեկը գտնվել է Շոշում: Հին ժամանակ Շիրդալներին համարում էին Աստծու զանձերի պահապանը:

[4] Mehri F., Iranian Depiction of Rhino, an Overview of Persian Poetry, The Journal of Iranian Studies, Tehran, Vol 11, No.1, P. 24

[5] Shakh dar tebbe ghadim va tebbe mardomi https://www.cgie.org.ir /fa/article/257816/%D8%B4%D8%A7%D8%AE, Accessed: Dec. 2022

Շիրդալների մենք նաև հանդիպում ենք մյուս ազգերի պատմություններում և գրականության մեջ: Դժոխքի և քավարանի ճանապարհորդությունը ավարտելով՝ Դանտեն շիրդալի վրա նստած, սլանում է լույսի արագությամբ և գնում դրախտ:

Շիրդալներին համարում էին Ահրիմանի, կախարդանքի ու ստի դիմաց պահապան:

3.2. Չամրոշ կամ Չամրոշ մորդ

Չամրոշը հսկայական թռչուն է, որ ոչնչացնում է թշնամի անիրաններին, որ ցանկանում են վնաս հասցնել Իրանին: Չամրոշը օգնում է Աստվածներից մեկին՝ Բորզիզադին: Նա բնակվում է Ալբորզ սարի գագաթին: Հարձակման դեպքում Բորզիզադը կանգնեցնում է Չամրոշին Ալբորզի վրա և նա թռչունի պես վերցնում է եգիպտացորենի հատիկները, հատիկ-հատիկ վերացնում է թշնամիներին: Ասում են՝ Չամրոշի մարմինը շան մարմնի նման է, իսկ գլուխն ու թևերը նման են թռչունի գլխի ու թևերի: Չամրոշը գիշերում է սոմայի ծառի տակ, նույն վայրում է քնում նաև Սիմորդը:

3.3. Մելմեդաս

Մելմեդասի մասին հեքիաթները հատուկ են Իրանի հարավային շրջանին: Տեղաբնիկ ձկնորսները հավատացած են, որ նա նման է ջրահարսի: Մելմեդասի մարմնի վերին հատվածը շատ գայթակղիչ է, գերում է նավաստի երիտասարդ տղաներին ու գայթակղում է կենակցելու: Կենակցելու ժամանակ, սակայն, հանկարծ Մելմեդասի մանգաղաձև ոտքերը սկսում են կտրատել երիտասարդին ու սպանում են նրան: Հորմոզգանում հավատացած են, որ Մելմեդասի ձեռքերն են մանգաղի պես: Նրանք հավատում են, որ Մելեմդասը նստում է աղի հանքերի մոտ ծառի ներքո և վարսերը շոյելով՝ գերում է տղամարդկանց: Վարսերով

գայթակղելու գաղափարը տարածված է եղել բազմաթիվ վայրերում, արևմուտքում հավատացած էին, որ չար ուժը փակված է պարուհիների չքնաղ մազերի մեջ իսկ հայկական աղբյուրներում հանդիպում է վարսերն արձակած հուշկապարիկների գաղափարը[6]: Կենակցելուց հետո նրա դեմքը վերափոխվում է ծեր վհուկի դեմքի ու բացահայտվում է ձեռքերի մանգաղաձև լինելը:

Բանահյուսության մեջ տարածված են տարբեր պատումներ այն մասին, որ լիալուսնի ժամանակ Մելմեդասն ի հայտ է գալիս ծովում և գերում միայնակ ձկնորսներին: Հմայված ձկնորսներն իրենց նետում են ծովը, և նա իր մանգաղաձև ոտքերով նրանց քաշում ու կտոր կտոր է անում:

3.4. Մանթիքոր կամ Մարդխար

Մարդակերը կամ Մանթիքորը հեքիաթային արարած է: Մանթիքորի դեմքն ու գլուխը մարդու դեմքի ու գլխի պես են, ունի մոխրագույն աչքեր, առյուծի նման՝ շականակագույն մազեր, պոչը կարիճի նման է: Այն չափերով առյուծից մեծ է, բայց ձիուց փոքր է:

3.5. Շահմարան

Շահմարանը օձերի արքա կամ ավելի ճիշտ օձերի թագուհին է, որին հանդիպում ենք նաև Իրաքյան և Անատոլիայի բանահյուսության մեջ: Շահմարանը բժշկության գիտակ է: Նրա հետ կապված է հետաքրքիր մի պատմություն: Քանսաբ անունով մի մարդ հանկարծ նկատում է Շահմարանին և խոստանում որ նրա տեղը չի հայտնի ոչ ոքի: Երբ սուլթանը հիվանդանում է բժիշկները խորհուրդ են տալիս ուտել Շահմարանի միսը: Անսպասելիորեն պարզվում է, որ Քանսաբը գիտի Շահմարանի գտնվելու վայրը: Նրան այնքան են ենթարկում կտտանքների, որ հայտնում է

[6] Հայրապետյան Վ. Հ., Հուշկապարիկի Գաղափարը Հայ Միջնադարյան Հավատալիքներում, Համահայկական Թվանշային Գրադարան, 1990, p. 57

Շահմարանի գտնվելու վայրը. վերջինիս բռնում են և թագավորի համար դարձնում են կերակուր: Քանսաբի խիղճը տանջվում է, և նա գնում է օձերին հանդիպելու: Հանդիպելով մի ծեր օձի՝ նա հասկանում է, որ Շահմարանը գիտեր իր ճակատագրի մասին և ինքն է ցանկացել որ Քանսաբի միջոցով կատարվեր այդ ամենը: Ուստի Քանսաբն է հանդես գալիս որպես բոլոր դարմանների գիտակ: Նրան երկու օձի ուղեկցությամբ ուղարկում են՝ ճամփորդելու աշխարհով մեկ, գործադրելու և լրացնելու Շահմարանի գիտությունը:

4. Ջրային արարածներ

4.1. Քառ կամ Քառա

Քառ ձուկը համարվում էր ձկների թագավորը և լողում էր ֆրախքարդ անվանվող օվկիանոսում, որտեղից սկիզբ էին առնում բոլոր գետերը: Նրանցից երկուսը հառմայի կամ սոմայի ծառի պահապանն էին և պտտվելով նրա շուրջ՝ պահպանում էին այն հրեշ գորտից: Նրանց զգայարանները շատ ուժեղ էին և ջրի մակերեսի տատանումները շուտ զգում էին:

4.2. Բաբա Դարյա

Բաբա Դարյան սևամորթ և բարձրահասակ բրդոտ մարդ է, Բաբա Դարյայի հասակն այնքան բարձր է, որ ծովի մակերեսը հասնում է նրա գոտկատեղին: Բաբա Դարյայի ձեռքերն ու ոտքերը մարդու ձեռքերի ու ոտքերի պես են, իսկ մատները փոքր են: Նա ցերեկը ծովում է, իսկ գիշերները քնելու նպատակով գալիս է ափ: Եթե ինչ-որ մեկին տեսնի ջրի մոտ թափառելիս, իր հետ ծովը կտանի: Բաբա Դարյան սարսափում է սղոցից ու ուրագից, փախչում է միմյանց զարկվող երկաթների ձայնից :

4.3.Գավ Մահի

Գավ Մահին կամ թարգմանաբար «մեծ ձուկը» գիշերներն արածելու նպատակով ծովից դուրս է գալիս: Քանի որ մութ է, իր շրջապատը տեսնելու համար քթից երկու փայլուն գոհարներ է հանում նետում գետնին և ապա դրանց լույսի ներքո արածում:

4.4.Բու Սալամեհ

Բու Սալամեհն հիմնականում պտտվում է Խարք կղզու մոտակայքում: Ասում են, որ Բու Սալամեհը մանուկներին առևանգում է ծովի ափից: Երբեմն գիշերով բարձրանում է նավերի վրա, ապա ներքև թռչում: Նավաստին կարծում է, որ իր ընկերն է ընկել ծովը, նետվում է ջուրը՝ ընկերոջն օգնելու : Այդ պահին Բու Սալամեհը նրան քաշում է ջրի տակ[7]:

5- Մարդակերպ արարածներ

5.1. Ալ

Երևակայական մտացածին արարած է, որը վախեցնում է ծննդկանին: Ալի մասին նմանատիպ հավատալիքներ կան նաև կովկասյան տարածաշրջի մի շարք երկրներում: Ըստ որոշ հավատալիքների՝ եթե նոր ծննդաբերած կնոջը միայնակ թողնեն, ապա Ալը նրան վնաս կհասցնի: Ալը գողանում է կնոջ սիրտն ու թոքերը և առաջին իսկ ջրի ճամփով հեռանում է: Հավատում են, որ չպետք է Ալին թույլ տալ հասնել ջրին, որպեսզի չկարողանա փախչել: Իրանցիները Ալին սանձելու ամենաազդեցիկ ելքը տեսնում են դեպի ջուրը տանող ճանապարհները փակելու մեջ: Եթե այն տանը, որտեղ երեխա է լույս աշխարհ եկել առկա է ջրավազան, ապա ծննդաբերության ցավերի սկսվելու հետ միաժամանակ դատարկում են ջրավազանի ջուրը: Երբեմն բարեկամները գնում են

[7] Farhadi F. and Farahani S., Mojudate Afsanehi va Daryayie Iran, https://rb.gy/hi7ygo , Accessed Dec, 2022

ծայրահեղությունների և ծննդաբերած կնոջը երեք օր ջուր չեն տալիս: Ալի հետ պայքարելու համար իրանցիները առաջնորդվում են մի շարք նախապաշարմունքներով. օրինակ՝ երբեք ծննդականին մինչև վեց օր մենակ չեն թողնում, նորածնի գլխավերևում դանակ են դնում, ծնվելու առաջին գիշերը նորածնին հանում են փողոց ու մի քիչ զբոսնում, շաբաթ և չորեքշաբթի գիշերով նորածնի համար էսֆանդ են ծխում[8]:

Բախտիարիների շրջանում շատ տարածված է Ալ բորդեհ կամ Էլահի Ալ բեբարադեթ արտահայտությունները, որը թարգմանաբար նշանակում է Ալի տարած կամ Ալը քեզ տանի: Ալի դեմքը նկարագրվում է որպես ցեխից քիթ, կրակոտ աչքեր, խառնված մազեր, երկաթե և սուր ատամներ, դուրս ցցված ժանիքներ և կախված կրծքեր ունեցող արարած: Հակառակ հայկական Ալին, որը բրդոտ կիսով չափ մարդ կիսով չափ կենդանի արարած է, իրանական Ալը կնոջ տեսք ունի: Ալն ունի ծղոտե զամբյուղ՝ զոհի թոքերն ու սիրտը մեջը դնելու համար: Նրանից պաշտպանվելու նպատակով կիրառում են բազմաթիվ հմայիլներ, երկաթե իրեր, սոխ ու սխտոր, արտասանում պաշտպանիչ աղոթքներ: Ծննդաբերության ընթացքում կնոջ արու ազգականներից մեկը բարձրանում է տանիք և զարկելով պղնձե ամաններին աղոթքներ է կարդում: Ասում են, որ Աստված Ալին ստեղծեց Ադամին ընկերակցելու համար: Ալը, սակայն, կրակոտ էր և չէր համապատասխանում հողածին Ադամին: Հենց սա էլ Եվայի և մյուս կանանց նկատմամբ Ալի թշնամանքի աղբյուրն է:

Այդ առումով Իրանում մինչև տաս օր ծննդաբերած կնոջը իր անվամբ չեն դիմում այլ կանչում են Մարիամ, Քրիստոսի մայր կամ Օզրա:

Քերման նահանգում հավատացած են, որ Ալը հանում է հղի կնոջ լյարդը և ուտելու նպատակով լվանում է ջրով: Եթե նրան

[8] Blokbashi Ali, Al Mojud, Markaze Dayeratalmaarefe Bozorge eslami, Tehran p. 5

հաջողվի լյարդն ուտել, ապա հղի կինը կմահանա։ Ասում են՝ ամեն մի տղամարդ կյանքում գոնե մի անգամ տեսել է լյարդը դեպի ջուր տանող կամ ջրի մոտ կանգնած լյարդը լվացող Ալին։ Ասում են՝ եթե խիստ խոսես Ալի հետ և բացականչես «Որտեղից ես վերցրել լյարդը, շուտ վերադարձրու այն», ապա Ալը կսարսափի, կթողնի իր դանակն ու փախչում։ Ալի դանակի սուր մասը կապույտ է և երբեք չի բթանում։ Հայկական բանահյուսության մեջ տարածված է այն հավատալիքը, որ Ալը տղաձգան կնոջ թոքը տանում և լվանում է ջրի մեջ, ապա կինն անմիջապես մահանում է[9]։

Իրանցիների հավատալիքներում հանդիպում է հավատալիք ծննդկանին վնասող մեկ այլ արարածի նկատմամբ։ Այդ արարածին անվանում են Շեշե և հավատում են, որ վեցերրորդ օրը այն կարող է խեղդել նորածնին։ Իրանի հարավային շրջանի բնակչության հավատալիքներում նույն կերպ է պատկերվում և նկարագրվում Օմ Սեբիանը։

5.2. Օմ Սեբիան

Օմ Սեբիան կոչվող հրեշի գաղափարը տարածված է Իրանի հարավային շրջանում, հատկապես Շադեգանում։ Նա կին հրեշ է, շատ ահարկու դեմքով, կովի ոտքերով և բազմաթիվ կրծքերով։ Նրա ատամները փղի պես են, մազերը արմավենու չորացած տերևների նման, ձայնը ամպրոպի պես է և քթանցքերից մուխ է դուրս գալիս։ Գիշերները և արշալույսից առաջ այն առևանգում է մանուկներին հատկապես՝ թխահեր և ու գեղեցիկ մեծ սև աչքեր ունեցող երեխաներին։ Ասում են՝ նրան տեսնողները կա՛մ խենթանում են, կա՛մ մահանում։ Նույն անունով հայտնի հիվանդություն կա, որը երեխաների ընկնավորություն է։ Նման մանուկներին բուժման նպատակով դաղում էին։ Սկզբում երեխային փաթաթում էին էշի

[9] Սինանյան Յ. Կ., Նախապաշարումներ, սովորութիւններ, և այլն, Բյուրակն Լրագիր, Պոլիս, 1899, 668

փալանի մեջ ապա մի կտոր էին վերցնում և գցում էին կրակի մեջ ու դրա մոխիրը քսում մանկան ճակատին երեք կետով:

5.3.Բախթաք

Բախթաք կոչվող արարածը պատճառ է դառնում, որ քնած մարդը խեղդվելու զգացում ունենա: Այն ահարկու մղձավանջի պես է, որ սկսում է ճնշել մարդու կուրծքը և կոկորդը: Իրանական բանահյուսության մեջ Բախթաքը մի արարած է որ գիշերով խեղդում է մարդկանց: Այդ աներևույթ էակը գիշերով պարուրում է մարդու ամբողջ մարմինը, կողպեքի պես քարացնում այն, և մարդն այդ պահին գիտակցում է իր անկարող լինելը: Բախթաքի սարսափելին այն է, որ մարդ զգում է նրա ներկայությունը բայց չի տեսնում:

Ասում են, որ Բախթաքը կամ Ֆերենջաքը Մակեդոնացու աղախինն էր: Երբ ագռավը Մակեդոնացու համար մութ աշխարհից բերած անմահական ջուրը թափում է գետնին, աղախինը մի բուռ արագ վերցնում է և ըմպում: Ալեքսանդրն այնքան է զայրանում, որ թրով զարկում է և կտրում աղախնի քիթը: Բախթաքը խմորից քիթ է պատրաստում և տալիս նրան[10]: Բախթաքը, որ հավիտենական կյանք ունի, թռչում է քնած մարդկանց վրա: Հավատում են, որ եթե հանկարծ քնածին հաջողվի բռնել նրա քիթը, ապա Բախթաքն ազատվելու դիմաց մարդուն կհայտնի Ալեքսանդրի գանձերի տեղը : Ասում են՝ Բախթաքը գիշերները թաքնվում է մեծ ծառերի ներքո և կարող է խեղդել ծառի տակ քնած մարդուն Այս դեպքում, իրականում, առկա է ածխածին գազի խնդիր: Ոմանք հավատացած են, որ եթե քնած մարդը կարողանա բռնել Բախթաքի կոկորդը կամ քիթը, ապա այդ մարդու բոլոր ցանկությունները կկատարվեն:

[10] Keyvani M. and Jafari Ghanavati M., Eskandar, Dayeratalmaarefe Bozorge Eslami, https://lib2.eshia.ir/12293/04/1193, Accessed: Dec, 2022

5.4. Դավալփա

Դավալփան իրանական հեքիաթներում, դժբախտ, խեղճ ու անկարող մի արարած է, որ նստում է մարդկանց ճանապարհին, սկսում է այնպիսի վայնասուն դնել, լացել, որ նույնիսկ քարն է փափկում: Եթե անցորդը նրան հարցնի լալու պատճառը, ապա Դավալփան կասի, որ ինքը հիվանդ է և կխնդրի իրեն հասցնել մոտակայքում գտնվող տուն: Եթե անցորդը հանձն առնի օգնել, ապա Դավալփան կնստի նրա վզին, քառասուն մետր երկարություն ունեցող ոտքերով կփաթաթվի անցորդի մարմնին, կկառչի նրանից, և անցորդը չի կարողանա ազատվել Դավալփայից: Զուր չէ, որ Դավալ պարսկերենում նշանակում է գոտի:

Այսօր Դավալփա են կոչում այն մարդկանց, որոնք անտեղի կառչում են որևէ կարծիքից, գաղափարից կամ պաշտոնից:

Դավալփայից ազատվելու ելքը նրան ոգելից խմիչք հրամցնելն է[11]:

5.5. Գելիմ գուշ

Տեսքով մարդու նման արարածներ են, որ շատ մեծ ականջներ ունեն: Նրանք ականջներից մեկը փաթաթել են իրենց շուրջ, մյուս ականջը քնելու ժամանակ գցել իրենց տակ[12]:

6-Հրեշներ ու չարքեր

6.1. Դիվե Սեփիդ

Ըստ Շահնամեհի պատմվածքների՝ Դիվե Սեփիդը Մազանդարանի Դիվանի իշխանն էր: Նա Իրանի թագավոր Քեյքավուսին և նրա հետևորդներին բանտարկեց. Ռուստամը գնաց նրանց ազատելու: Նա մուտք գործեց այն քարանձավ, որտեղ դիվե

[11] Sadegh Hedayat, Neyrangestan Afsanehaye Amiyaneh, Amir Kabir, Tehran, 1342, P. 173

[12] Mohammadi Badr Narges, Kohan Olgu-ye Parvares-e saxsiyatha-ye asatiri tavassote heyvanat va mojudat-e ostureh-I, Pajouhesh Nameh Farhang va Adab, Bahar va Tabestan, 1394, p. 19

սեփիդը բանտարկել էր նրանց և տեսավ, որ դիվը քնած է: Ըստ տղամարդկության օրենքների Ստոր պահվածք չցուցաբերելու համար Ռուստամն արթնացրեց նրան և սկսեց մենամարտել: Ռուստամը կտրեց դիվի մի թևն ու մի ոտքը, հանեց դիվի լյարդը, գլխից սաղավարտ պատրաստեց և ազատեց բոլորին:

6.2. Էֆրիթ

Էֆրիթը գոյություն ունի և՛ իսլամական և՛ իրանական պատմվածքներում: Նա մարդկանց մեջքը խփում է գետնին. ուժը Էֆրիթի ամենավառ հատկությունն է: Էֆրիթը շատ ուշիմ արարած է:

6.3. Ֆուլադզեռեհ

Էֆրիթի պես մեծ ու կոտոշավոր դևի անունն է Ամիր Առսալան Նամդարի պատմության մեջ: Սույն պատումի մեջ Ֆուլադզերեհը շրջում է երկնքում, նկատում գեղեցիկ կանանց և առևանգում[13]: Սկզբնական շրջանում նա Շահե Փարիանի բանակի սպարապետն էր: Ֆուլադզերեհի մայրը, որ շատ հմուտ վհուկ էր կախադանքով ֆուլադզերեհի մարմինը անխոցելի դարձրեց բոլոր զենքերի նկատմամբ. նա, սակայն, չկարողացավ որդուն անխոցելի դարձնել ~~բացի~~ Շամշիրե զոմմորոդնեգարի դեմ:

Հեքիաթի ավարտին նրանք երկուսն էլ սպանվեցին Ամիր Արսալանի կողմից:[14]

Ժողովուրդը հաղթանդամ, տգեղ և երեսառած կանանց « անվանում է ֆուլադզերեհհի մայր»:

6.4. Լուլու խոռխոռեհ կամ լուլու

Երևակայական արարած է, որը հորինել են ծնողներին չլսող, չարաճճի, ուտելիքից հրաժարվող երեխաներին վախեցնելու

[13] Ebrahimi Maasumeh, Div Shenasi Irani, Farhameh, Tehran, 1397, P. 70
[14] Ebrahimi Maasumeh, Div Shenasi Irani, Farhameh, Tehran, 1397, P. 76

նպատակով: Հավատում են, որ այդ արարածն ուտում է չար մանուկներին կամ առևանգում նրանց: Այդ արարածի՝ համընդհանուր ընդունված արտաքին նկարագրությունը չի հանդիպում բանահյուսության մեջ: Ամեն մի ընտանիք ստեղծում է իր պատկերած լուլուխոռխոռեն:

Լուլու խոռխոռեի ածականը նշանակում է շատակեր: Խրտվիլակներին անվանում են Լուլույե սարե խարման: Երբեմն էլ մարդիկ անտրամաբանական վախերը անվանում են լուլու:

6.5. Ջին

Ղուրանում բազմիցս նշվել է ջիների ու սատանաների մասին, նույնիսկ դորանի սուրաներից մեկը ջին է անվանվում: Պարսկերենում ջիները նման են ու համեմատելի դիվերն ու փարիները. բանահյուսության մեջ, սակայն, դրանք նույնպես հաճախ հենց ջին են անվանվում

Ջինը արարած է, ով ծնվել է կրակից, այն նյութական է ունի հոգի ու մարմին: Այն կարող է լինել անհավատ կամ հավատացյալ: Ջինը համեմատելի է քրիստոնեական վտարված հրեշտակներին: Միակ տարբերությունն այն է, որ իսլամում կան նաև մուսուլման և հավատացյալ ջիներ: Ըստ իսլամի ջինի նշանը անծուխ կրակն է[15]:

Ոչ կրոնական պատումներում ջիները շատ բազմազան են: Իրանական հեքիաթներում կան տարբեր տեսակի ջիներ: Նրանք կարող է լինեն մեծ, փոքր, գեղեցիկ, տգեղ: Հավատացյալ համարվող ջեներին պատկերացնում են գեղեցիկ դիմագծերով, իսկ քաֆար կամ անհավատ ջիներին՝ որպես սարսափելի հրեշ՝ դեմքի վրա մի մեծ աչքով, խոշոր, դուրս ցցված ատամներով: Որոշ ջիներ հանդես են գալիս որպես հիբրիդներ և վատ հոտ են արձակում: Իրանական գրականության մեջ ջիների մասին հիշատակություններն այնքան

[15] The Holy Qoran, 55:14, Alrahman, 1

էլ շատ չեն: Շահնամեհում միայն մի անգամ է նշվում ջինի մասին. Սաադ Էբնե Վաղարը ջիների մասին նշում է Սասանյան զորահրամանատար Ռոսթամ Ֆարրոխզադին ուղարկած նամակում։

Բանահյուսության մեջ հանդիպում է այն գաղափարը, որ ջիներն էլ մարդկանց նման ունեն հասարակություն. ջիները մարդկանց պես ապրում են, ամուսնանում են, ուրախանում, տխրում, սգում, պարում: Ջիներին հնարավոր է սանձել և հենց այդ պատճառով էլ ջենգիրի են անում: «ջենգիրին արարողություն է, որի միջոցով կարելի է բռնել ջեններին»/: Շատերը հավատում են, որ եթե ջիների մասին հիշատակես, նրանք կհայտնվեն կամ վնաս կհասցնեն, ուստի աշխատում են ջիների անունը չտալ: Առօրյա խոսքում ջիներին անվանում են ազ մա բեհթարան, որ թարգմանաբար նշանակում է մեզմե աղեկներ: Նրանցից հեռու մնալու համար մարդիկ խուսափում են սուլել, քար նետել, ձուն և սոխը միասին խաշել–կամ գիշերը տունն ավլել: Հիմնականում ջիներին հեռացնելու համար արտասանում են բեսմե ալլահե ռահմանե ռահիմ աղոթքի բանաձևը:

Ըստ իրանական լեգենդների՝ ջիները հետապնդում են չափից ավելի որս անող որսորդներին, նրանց եղջերուի վերածում, ապա որսում, մաշկազերծ անում և խորովում: Ջիները հատկապես շատ են վնասում մարդկանց շաբաթ և երեքշաբթի օրերին. օրինակ՝ կարող են փոխել մարդկանց երեխաներին՝ տեղը դնելով ջինի երեխա[16]: Սիսթանցիները հավատացած են, որ գոյություն ունի դիվե Եահլո անվամբ մի ջին, ով նման է ցուլի և կարող է մարդկանց բռնաբարել: Սիսթանցիների հավատալիքներում կա նաև մեկ այլ ջին, որին անվանում են քոլուխ փարան: Վերջինս իր շիկացած ցեխ ու քար է նետում դեպի իր զոհերը, սակայն մարդիկ ինչքան էլ փորձում են, չեն կարողանում տեսնել այդ ջենին:

[16] Mohammad Ali Mohammad, Az Ma Behtaran, Tandis, Tehran, 1392, P. 34

Իհարկե, սա Սիսթանցիների հավատալիքներում հանդիպող միակ ջինը չէ: Սիսթանում ամենահայտնի ջինը Մարդազման է, որի մասին պատումները տարածված են ողջ Իրանի տարածքում: Սիսթանում հավատացած են, որ եթե մարդ Մարդազմայից վախենա, ապա Մարդազման վախեցնելով կսպանի իր զոհին: Հավատում են, որ մարդ առանց վախի կարող է նաև ընկերանալ Մարդազմայի հետ: Մարդազմային պատկերացնում են ընտանի կենդանու տեսքով, որ կարող է հանկարծակի կերպարանափոխվել, խոսել, փորձության ենթարկել ճամփորդներին, հատկապես՝ տղամարդկանց: Մարդազմայի նպատակն է բացահայտել այդ տղամարդկանց կամքն ու քաջությունը: Ըստ լեգենդների՝ Մարդազման ի հայտ է գալիս առավելապես խավար և ամայի վայրերում, սակայն մարդկանց վնասելու մտադրություն չունի:

Հարավային Խորասանում Մարդազմային անվանում են Մորդեհ ազմա: Մարդազմային պատկերացնում են որպես ահավոր տգեղ վհուկ՝ ծեր երկար դեմքով, ուղղահայաց բերանով, հորիզոնական փայլուն ատամներով: Հավատում են, որ Մարդազման ապրում է սարսափելի գերեզմանոցներում և ջրաղացներում, խուսափում է լույսից և կարող է ընդօրինակել մարդկանց ձայնը:

Լորեսթանի շրջանում ջինին անվանում են՝ Մարթազմա: Որոշ պատումներում նշվում է, որ ինչքան շատ նայես այդ արարածին, այդքան շատ այն հասակ կառնի ու կմեծանա: Ոմանք նրան նկարագրում են որպես մազի պես բարակ մի արարած, որ անընդհատ երկարում է և հասնում է սարերի բարձրության: Քերմանում Մարդազման նկարագրվում է որպես ընդամենը բահի կոթի հաստություն ունեցող արարած, որ քիչ-քիչ հասակ է առնում: Հավատում են, որ եթե մարդ նրան հարցեր տա, նա ճիշտ կպատասխանի, նույնիսկ կարող է օգնել մարդկանց՝ գտնելու

կորած իրերը: Կան մեծ ընտանիքներ, որոնց անդամներից մեկը միշտ պնդում է, որ որ մի անգամ տեսել է Մարդազմային:

Սարբանդանի շրջանում այս ջինին անվանում են Մադրոզովան և պատկերացնում նիհար մարդու տեսքով: Հավատում են, որ այն գիշերները հայտնվում է անապատներում և մոտենում է միայնակ մարդկանց: Եթե մարդը, տեսնելով նրան, փախչի, ապա Մադրոզովանը կսկսի հետևել փախչողին. զոհին հետապնդելու ընթացքում Մադրոզովանի հասակն աստիճանաբար կերկարի: Ասում են, որ եթե մարդիկ Մադրոզովանից չվախենան, ապա ոչ մի վատ բան չի պատահի: Մադրոզովանն ունի շատ երկար պարան հիշեցնող ոտքեր, որոնցով կարող է փաթաթվել իրենից փախչող զոհի մեջքին, ոտքերին. մարդը կարող է հավերժ մնալ Մադրոզովանի գերին: Սարբանդանի շատ մարդիկ հավատացած են, որ երիտասարդ տարիքում տեսել են Մադրոզովանին: Ասում են, որ նա կարող է հայտնվել նաև խոսող այծի կամ մի ոչխարի, նույնիսկ մի բուռ բրդի տեսքով[17]:

Իրանի քրդաբնակ շրջաններում Մադրոզովանին անվանում են Ջավան ազմա:

Իրանցիները հավատում են, որ մարդազմային վախեցնելու, հեռու քշելու համար պետք է պինդ բռնել տաբատի գոտկատեղը:

Ահմադ Շամլուի Քուչեի գրքում Մարդազման համարվում է ջին, ով կարող է կերպարանափոխվել և հանդես գալ տարբեր տեսքերով:

6.7. Օմ ալ-Մասահի

Իգական սեռի ջին է, որ ձեռքերի փոխարեն բահ ունի և հարձակվում է գիշերով արտում աշխատող հողագործերի վրա:

6.8. Նասնաս

Ասում են այս ջինի մարմնի մի հատվածում մարդու մարմին է, մյուս հատվածը կենդանու: Նասնասը կարող է ունենալ մարդու

[17] Mohammad Ali Mohammad, Az Ma Behtaran, Tandis, Tehran, 1392, P. 78

մի ոտք, մի ձեռք ու մի աչք: Նասնասը կատակասեր արարած է, բարձրանում է ծառերի վրա, փախչում է շների հաչոցից: Ոմանք հավատացած են, որ այն երկու սեռ ունի: Նասնաս կոչվող արարածները կարող են նաև պատճառ դառնալ, որ տանը հրդեհ բռնկվի:

Իրանական ամենահայտնի պատումներից մեկը Ղուզ բալա ղուզի մասին է, այդտեղ խոսվում է ջենների մասին: Ըստ այդ պատումի՝ երկու սապատավոր մարդ ջիների են հանդիպում: Նրանցից մեկը գնում է բաղնիք ու սկսում է պարել: Պարզվում է ջիների հարսանիքն է, և ջիները որպես երախտագիտության նշան նրա մեջքից վերցնում են սապատը: Մյուսը, լսելով այդ պատմությունը, գնում է բաղնիք ու սկսում պարել ջիների հավաքին, սակայն պարզվում է որ այս անգամ ջիները սգում էին իրենց ազգակից ջիներից մեկի մահը. որպես պատիժ, ջիները նրա վրա մի սապատ էլ ավելացնում են:

6.9. Դի Զանգրու

Իրանական բանահյուսության մեջ այս արարածի անվան հետ է կապվում լուսնի խավարումը: Հին ժամանակ Բուշեհրցիները կարծում էին թե Դի զանգրուն խեցգետինի տեսք ունեցող արարած է, որ կարող է կուլ տալ լուսինը: Այդ արարածի պատճառով էր տեղի ունենում լուսնի խավարումը: Քանի որ, ըստ տարածված հավատալիքների, նմանատիպ արարածները սարսափում են մետաղներից, լուսնի խավարման պահին ժողովուրդը մետաղե իրերն իրար էր խփում և երգում ծովի ափին այնքան, մինչև մինչև Դի Զանգրուն բաց կթողներ լուսինը: Լուսնի խավարումից մի քանի օր հետո էլ երեխաները երգում էին այս երգերը:

6.10. Զառ

Պարսկերենում նշանակում է անկարող, շփոթված: Զառի հետ կապվցած հավատալիքները հիմնականում տարածված են Իրանի

հարավային շրջաններում: Այդ հավատալիքի արմատները հասնում են Աֆրիկա: Իրանում ջիներին հեռացնելու միակ պաշտոնական, թույլատրելի արարողությունը զար կոչվող արարողությունն է: Այս ծեսի ընթացքում բաբազարը օգտագործում է բոխուրե զառ, այսինքն զառի գոլորշի որը ներկաների շրջանում հալուցինացիա է առաջացնում[18]: Զառի բուխուրը պարունակում է մի քանի տերևներ, արմատներ, ծառի կոճղից հատվածներ, յուղ և մանր քարեր:

7- Բարի Արարածներ

Փերիներ

Ավեստայում նշվում է, որ փարին սատանայական արարած է, որը ի հայտ է գալիս գեղեցիկ և հմայիչ կնոջ տեսքով: Նա անընդհատ հայտնվում է, անհայտանում, տարբեր ձևեր է ընդունում, կերպարանափոխվում է, խաբում մարդկանց, ստիպում է վատ արարքներ կատարել և խելագարության հասցնում: Փերիները սարսափում և փախչում են կրակից, հենց այդ պատճառով էլ պետք է միշտ տանը կրակ վառել: Նրանք նաև սարսափում են մետաղե և սուր իրերից:

Շահնամեհի պատումներում նշվում է, որ Ռուստամի յոթ փորձություններից մեկի ժամանակ գեղեցիկ ու զուգված մի կին, ուղ նվագելով, մոտենում է փահլևաններին և Ռոստամին հրավիրում զվարճանքի: Սակայն երկու փահլևաններն էլ հասկանում են, որ գործ ունեն փարիի հետ և սպանում են նրան:

Իսլամի տարածումից հետո փարիները ստացան հակառակ բնութագիր: Փերիները երիտասարդ, սիրելի ու գեղեցիկ արարածներ են, որոնք բարի կամեցողներին երջանկություն են պարգևում: Փերիների թագավորը շահե փարիյանն է՝ բարի և

[18]Jen va az ma behtaran dar bavare Iranian, Khabargozarie Daneshjuyane Iran, https://rb.gy/w6kj7y, Accessed Dec 2022

արժանապատիվ արարած։ Շահե փարիյանի որդին ու դուստրը համարվում են բոլոր երիտասարդների երազած ամուսինը։

Իրանական առասպելներում փարիները հրեշտակի ու չար արարածների միջև են գտնվում։ Նրանք երբեմն այցելում են մարդկանց։ Դիվսանները համարվում են փարիներին հակադիր, հակոտնյա արարածներ։ Ըստ ավանդապատումների՝ դիվսանները գտնվում էին չարքերի կարգում և թիրախավորել էին փարիներին։ Դիվսանները փարիներին բանտարկում էին երկաթե վանդակներում, փարիների չէին կարողանում երկար դիմադրել և շուտով սկսում էին համալրել չարքերի շարքերը։

Իրանական բանահյուսության մեջ առկա են նաև մի շարք կերպարներ, որոնք չունեն հստակ չարի կամ բարու գործառույթ և բնութագրվում են՝ կախված իրադրությունից։ Սա արդեն ուսումնասիրության արժանի այլ թեմա է, որին կանդրադառնանք հաջորդ հոդվածում։

SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE

Noonik Darbinian

(Summary)

Mythical creatures are the manifestation of the terrible events that our ancestors saw and the reflection of the imaginary phenomena that developed their everyday life. The evil creatures described in the legends and fairy tales and the heroic man who fights against them symbolize our inner drive to conquer the world and discover its mysteries.

Many monsters and creatures endowed with supernatural powers are found in Iranian folklore. These creatures sometimes appear in the form of an old man, a beauty, an animal, or a hybrid. It is impossible to specify precisely the origin of the appearance of all these creatures.

Within the framework of the article, we carefully studied the creatures found in Iranian folklore, myths and, fairy tales and classified them.

Classification is based on the physical, operational, and regional characteristics of these creatures. In the article, we have also referred to the rituals and ceremonies that are used in different regions of Iran in order to reduce or protect the destructive influence of these creatures.

Thus, we classified the mysterious creatures into five main groups and discussed them in the article.

НЕКОТОРЫЕ СУЩЕСТВА В ИРАНСКИХ СКАЗКАХ И ФОЛЬКЛОРЕ

Нуник Дарбинян

(Резюме)

Мифические существа являются выражением страшных событий, очевидцами которых были наши предки, и отражением воображаемых явлений, встречавшихся в их повседневной жизни. Злые существа, описанные в легендах и сказках, так же как и героический человек, сражающийся с ними, символизируют наше внутреннее стремление завоевать мир и раскрыть его тайны.

В иранском фольклоре встречаются множество чудовищ и существ, обладающими сверхъестественными способностями. Эти существа иногда встречаются в виде старика, красавицы, животного или гибрида. Точно указать на происхождение внешности всех этих существ невозможно.

В рамках статьи мы подробно изучили существ, встречающихся в иранском фольклоре, мифах и сказках, и классифицировали их.

Классификация основана на физических, деятельных и региональных характеристиках этих существ. В статье мы также упомянули ритуалы и церемонии, которые распространены в разных регионах Ирана, чтобы уменьшить разрушительное влияние этих существ или защищаться от них.

Таким образом, мы разделили загадочных существ на пять основных групп и обсудили их в статье.